

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Հակոբյան Գոհար Գարեգինի

«Հարավկասպյան-ատրպատականյան իրանական լեզվամիությունը»

Ժ.02.06 – «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան
2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ. պրոֆ. Գառնիկ Սերոբի Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ. պրոֆ. Միխայիլ Սերգեյի Պելևին
Բ.Գ.Թ. Վահե Սուրենի Բոյաջյան

Առաջատար կազմակերպություն՝ Թեհրանի համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022թ. հունիսի 13-ին՝ ժ.15-ին ՀՀ ԳԱԱ Հրաջյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ «Լեզվաբանություն» 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փողոց 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. ապրիլի 28-ին:

Մասնագիտական Խորհրդի գիտական քարտուղար՝

Բ.Գ.Թ., դոցենտ

Ն.Մ. Սիմոնյան

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Լեզվամիություն (*Sprachbund*) ասելով՝ սովորաբար հասկանում են երկար համակեցության արդյունքում զուգահեռ և նույնանման հատկանիշներ ձեռք բերած ոչ ցեղակից լեզուների միավորումը: Լեզվամիության օրինակ է Կովկաս-անատոլիական լեզվամիությունը, որն ընգրկում է հայերենը, վրացերենը, թուրքերենը, օսերենը:

Ատենախոսությունը ենթադրում է *լեզվամիություն* հասկացության այլ մեկնություն. մենք քննում ենք սերտ ցեղակից լեզուների մի խումբ, որոնք պատկանում են իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին (խոսքը հարավկասպյան-ատրպատականյան լեզուների՝ զազայի, գիլաբի, մազանդարանիի, թալիշերենի, թաթերենի, գորանիի, Սեմնանի շրջանի բարբառների, կենտրոնական կասպյան և կենտրոնական Ալթորգի բարբառների մասին է):

Ատենախոսության թեմայի արդիականությունը և արդյունքների նորությունը

1) Աշխատանքը գիտական շրջանառության մեջ է դնում *լեզվամիություն* հասկացությունը սերտ ցեղակից լեզուների համար:

2) Ժամանակակից իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբին պատկանող լեզուների համեմատական քննությանը շատ քիչ ուշադրություն է դարձվել: Ավելին, գոյություն ունեցող ուսումնասիրությունները վերաբերում են այս լեզուների առանձին բարբառների կամ բարբառախմբերի քննությանը: Այս առումով ատենախոսությունը մեծ կարևորություն ունի իրանական լեզուների համեմատական լեզվաբանության համար:

3) Ատենախոսությունը նաև հստակեցնում է զազաների և գորանների պատմական հայրենիքի աշխարհագրական սահմանները. զազան այժմ տարածված է ժամանակակից Թուրքիայի Արևելյան Անատոլիայի շրջանում՝ սահմանակից լինելով հյուսիսում՝ Բաբերդի (թուրք. Bayburt) շրջանին և Ճորոխ (թուրք. Çoruh, հուն. Ἀκαμφύς) գետին, հյուսիս-արևմուտքում՝ Սեբաստիային (թուրք. Sivas, հուն. Σεβάστεια, Σεβαστή), հարավ-արևմուտքում՝ Մալաթիային (հուն. Μαλάτεια), հարավում՝ Տիգրանակերտին (թուրք. Diyarbakır, ասոր. Āmid), հարավ-արևելքում՝ Վանա լճին, իսկ գորանին՝ Իրան-Իրաք սահմանի երկայնքով՝ ընդգրկելով հարավ-արևելքում Քերմանշահի, հյուսիս-արևելքում՝ Սանանդաջի, հյուսիս-արևմուտքում՝ Մոսուլի միջև ընկած տարածքը: Սակայն ենթադրվում է, որ զազաներն ու գորանները իրենց ներկայիս բնակության տարածք են գաղթել Կասպից ծովի հարավային ափերից մոտավորապես 9/10-12-րդ դարերում, որը հաստատվում է ատենախոսության մեջ ներկայացված հնչյունական, ձևաբանական և բառապաշարային բացառիկ զուգաբանություններով:

Կիրառական նշանակությունը

Ատենախոսությունն ունի ոչ միայն կարևոր լեզվաբանական նշանակություն հյուսիսարևմտյան իրանական լեզուների պատմական և համեմատական ուսումնասիրության համար, այլև ոչ պակաս նշանակություն՝ տարածության մեջ տարբեր լեզուներով (բարբառներով) խոսող խմբերի տեղաշարժերը որոշարկելու առումով:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Աշխատանքում կիրառվել է լեզվաբանության պատմահամեմատական մեթոդը:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-ռուսական համալսարանի Արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, հավելվածից, եզրակացությունից և գրականության ցանկից, որոնց համառոտ նկարագրությունը տրվում է ստորև:

Ներածություն

Ներածությունը բաղկացած է չորս մասից.

- 1) Առաջին մասում ներկայացվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները:
- 2) Երկրորդ մասում ներկայացված է լեզվամիությունը կազմող լեզուների աշխարհագրական տարածքը:
- 3) Երրորդ մասում շոշափվում են աշխատանքի մեթոդաբանությունը և զուգաբանությունների ընտրության չափանիշները:
- 4) Չորրորդ մասում ներկայացված է ուսումնասիրվող լեզուների և բարբառների տառադարձման համակարգը:

Գլուխ I. Հնչյունական զուգաբանություններ

Առաջին գլուխը նվիրված է լեզվամիության մեջ մտնող լեզուների հնչյունական համակարգի ուսումնասիրությանը: Որպես հնչյունական զուգաբանություն առանձնացվում է հին իրանական բառակարգի **h₂*- (**xw*-/**hw*-) > *w*-/*v*- զարգացումը զազայում և գորանիում: Օրինակ՝

• զազա (հարավային բարբառ) *wā*, *wāi*, *wāyāla*, *wāka*, *wāra*, (հյուսիսային բարբառ) *wāa*, *wāya*, *wāra* «քույր», գորանի (քանդակայի, բաջլանի, զարդայի, լուհոնի, շաբաքի բարբառներ) *wāle/a*, *wāli*, *wālik* < նախաիրանական **h*(*u*)*āhar*-/*h*(*u*)*āhar*- (< նախահնդեվրոպական **syesor*-): Սակայն ավետերեն *xʷanhar-*, միջին պարսկերեն *hwʰh*(1) (AHTE(1))/*xwāh*(*ar*)/, մանիքեական միջին պարսկերեն *xwʰh/xwāh*/, պարթևերեն/մանիքեական պարթևերեն *wxʰr/wxār*/, սողերեն *γwʰrh*, *xwʰr* /*xwār*/,

խոթաներեն *hvar*: Հմմտ. ժամանակակից պարսկերեն خاھر [x^vāhar], քրդերեն (հյուսիսային և կենտրոնական բարբառներ) *xūšk*, *xūh*, *xūhā*, (հարավային բարբառ) *xwayšk*, *xwašk*, *xō(y)šk*, մագանդարանի *xāxer*, գիլաքի *xā/axur*, սեմնանի *xuāka*, սանգեսարի *xak*, *xaku*, սորխեի *xāk*, լասգերդի *xāk*, շահմիրզադի *xaxar*, բիյաբունաքի *xuaka*, աֆթարի *xaker*, խունսարի *xīā*, գյազի *xu/ox*, թալեղանի *hova*, *huā*, *xā*, թաթերեն *xāv*, *xāla*, *xow*, *hāvar*, *hāv*, *howa*, *howlig*, բելուջերեն *gohār*, *gwār*, *guhār*, *gwahār*, պարաչի *xī* (< **hvahī*), օրմուրի *xwār*, փաշթոն *xor*, օսերեն (իրոնական բարբառ) *xo*, (դիզոբական բարբառ) *xwære*, յիդլա *ixō* (< **yaxwā* < **ha^vva* < **hūāha*) և այլն:

• գազա (հյուսիսային և հարավային բարբառներ) *ward-* (*wan-*), գորանի (լուհոնի, քանդուկայի, բաջալանի, շաբաքի, գահվարայի, գավրաջուի, զարդայի բարբառներ) *wālard/δ-* (*war-*) < նախաիրանական **h₂uar-* «ուտել»: Հմմտ. ավեստերեն *x^var-*, միջին պարսկերեն *hwl-* (*ŠTHN-) *lxwar-l*, մանիքեական միջին պարսկերեն *xwt-* *lxwar-l*, պարթևերեն/մանիքեական պարթևերեն *wxr-* *lwxar/*, խոթանեսերեն *hvar-*, սողդերեն *xwt* *lxwar*, *xurl*, *xwyt-* *lxwērl*, խորեզմերեն *xwr-*: Նոր իրանական լեզուներում՝ նոր պարսկերեն خوردن [x^vo/urdan], քրդերեն (հյուսիսային բարբառ) *xwār*-*lxu-*, (կենտրոնական բարբառ) *xwārd*-*lxō-*, (հարավային բարբառ) *xwārd-*, *hwārd-*, թալիշերեն (հյուսիսային բարբառ) *hārd*-*lha-*, (կենտրոնական բարբառ) *hard*-*lar-*, (հարավային բարբառ) *hard*-*lhar-*, թաթերեն *hard*-*lhar-*, գիլաքի *xurd*-*lxur-*, մագանդարանի *xord*-*lxor-*, սեմնանի *xurd-*, *xurl*-*lxur-*, սանգեսարի *-xort-*, *-xord*-*lxan-*, շահմիրզադի *xord*-*lxor-*, ֆարիզանդի *-xard-*, *-xa*-*l*-*xar-*, գյազի *xort*-*xer-*, խունսարի *xurt*-*lxor-*, *xur-*, համադանի *xort*-*lxar-*, խաֆահանի *xort*-*lxer-*, նայինի *xārt*-*lxur-*, նաթանգի *-xard*-*lxor-*, սիվանդի *fārd*-*(f)er-*, պարաչի *xar*-*xūr-*, օրմուրի *xuhuk*, *xwalak*-*lxur-*, օսերեն (իրոնական բարբառ) *xēryn*-*xord-*, *xærd-*, (դիզոբական բարբառ) *xwærun*-*xward-*, փաշթոն *xwarə*-*lxūr-*, յաղնոբի *x^(v)ortal*-*x^war-*, շուրնի *xūd*-*xar-*, սարիքոլի *xig*-*lxor-*, յազդուլամի *xug*-*lxār-*, *x^war-*, յիդլա *xoar*-*lxur-*, մունջի *xūr*-*lxur-* և այլն:

Գլուխ II. Ձևաբանական զուգաբանություններ

2.1 Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կազմությունը

2.1.1 Հին իրանական *-ant-ով (< նախահնդեվրոպական *-ent-/*-ont-) ներկա դերբայից կազմված սահմանական եղանակի ներկա ժամանակաձև

Այս ներկա ժամանակաձևը հանդիպում է զազայում, արևելյան գիլաքիում, մագանդարանիում, Սեմնանի շրջանի բարբառներում (սորխեի, լասգերդի, աֆթարի, սանգեսարի, շահմիրզադի), թաթոյի թալեղանիում, կենտրոնական կասայան բարբառներում (քալարդաշթի, թոնեքաբոնի, ուսմարի) և կենտրոնական Ալբորզի որոշ բարբառներում (վելաթուրի կամ վելայաթուրի, յուշի, ջաջուրի): Օրինակ՝ գազա (հյուսիսային բարբառ) *sona* «ես գնում եմ», (հարավային բարբառ) *nusnanā* «ես գրում եմ», արևելյան գիլաքի (լախիջանի) *anəm* «ես գալիս եմ», (լանգառուդի) *gunəm* «ես ասում եմ», մագանդարանի (սարավի) *persembe* «ես հարցնում եմ», (ամոլի) *demə* «ես տալիս եմ», (բաբոլսարի) *demme* «ես տալիս եմ», (էսփիվարդի) *gəmbə* «ես ասում եմ», թաթոյի թալեղանի *āmə* «ես գալիս եմ», վելաթուրի *ešnumma* «ես նայում եմ», յուշի *zammo* «ես հարվածում եմ», ջաջուրի *šunema* «ես գալիս եմ», քալարդաշթի *fameme* «ես հասկանում եմ», թոնեքաբոնի *sujanom* «ես այրում եմ», ուսմարի

šānəm/šonom «ես գնում եմ», սորխեի *hakin* «ես անում եմ», լասգերդի *ākin* «ես անում եմ», աֆթարի *āmi* «ես գալիս եմ», սանգեսարի *nerendi* «ես նստում եմ», շահմիրզադի *porsemma* «ես հարցնում եմ»:

2.1.2 Զրո ցուցիչով սահմանական եղանակի ներկա ժամանակաձև

Ներկա ժամանակաձևը չունի որևէ ցուցիչ հարավային թալիշերենում, արևմտյան գիլաբիում, կենտրոնական թաթերենում, թաթոյիդ ռուդբարիում, կենտրոնական կասսայան թոնեքաբոնի և ռամսարի բարբառներում (ներկա II): Այն կազմվում է ներկայի հիմքով և ներկա ժամանակաձևի համապատասխան դիմային վերջավորություններով: Օրինակ՝ հարավային թալիշերեն (մասալի) *xumum* «ես կարդում եմ», (մասուլեի) *nišəm* «ես նստում եմ», արևմտյան գիլաբի (ռաշթի) *nəšīnəm* «ես նստում եմ», կենտրոնական թաթերեն (քարնադի) *xvarem* «ես ուտում եմ», (լերդի) *šim* «ես գնում եմ», (շալի) *verijəm* «ես վազում եմ», (դերովի) *šum* «ես գնում եմ», (խոյնի) *gerem* «ես վերցնում եմ», ռուդբարի *ganom* «ես ընկնում եմ», թոնեքաբոնի *xarəm* «ես ուտում եմ», ռամսարի *zanəm* «ես հարվածում եմ»:

2.2 Սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևեր

2.2.1 *andar*-ով կազմված սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևեր

2.2.1.1 *andar*-ով կազմված օժանդակ բայը հաջորդում է հիմնական բային:

Այս ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևերը հանդիպում են հյուսիսային թալիշերենում, թաթերենում, գիլաբիում, կենտրոնական կասսայան ռամսարիում: Օրինակ՝ թալիշերեն (հյուսիսային բարբառ) *vaštédam/váštídám/váštám* «ես ցատկում եմ», *votedal/votda bim* «ես ասում էի», թաթերեն (հարավային բարբառ) *xordamúnd* «նրանք ուտում են», (կենտրոնական բարբառ) *argatarim* «ես գնում եմ; վերցնում եմ», *āmeda bim* «ես գալիս էի», (հյուսիսային բարբառ) *āmānden* «ես գալիս եմ», *šende beri* «դու գնում էիր», գիլաբի (արևմտյան բարբառ I) *kudən dərəm* «ես անում եմ», *fovordən dubum* «ես ուտում էի», (արևելյան բարբառ I) *šo darəm* «ես գնում եմ», *hada dəbum* «ես գնում էի», ռամսարի *ništarəm* «ես նստում էի», *hamadabām* «ես գալիս էի»:

2.2.1.2 *andar*-ով կազմված օժանդակ բայը նախորդում է հիմնական բային:

Այս կառուցը օգտագործվում է ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևերի կազմության համար կենտրոնական թաթերենում, թաթոյիդ թալեղանիում և ալամոյթիում, մազանդարանիում, կենտրոնական Ալբորզի բարբառներում (վելաթրոփ, լանիզի, դարբանդսարի), Սեմնանի շրջանի բարբառներում (աֆթարի, սանգեսարի, շահմիրզադի), կենտրոնական կասսայան բարբառներում (քալարդաշթի, թոնեքաբոնի): Օրինակ՝ կենտրոնական թաթերեն (դիքին-մարադեի) *dari mebin* «ես դառնում եմ», թալեղանի *dare xərmí* «մենք ուտում ենք», *dare xorem bia* «նա ուտում էր», ալամոյթի *dari mi ši* «դու գնում ես», *dāri eškia* «ջարդում է», *dāri eškast* «ջարդում էր», մազանդարանի (սարավի) *dar(me) kār kāmbe* «ես աշխատում եմ», *dai(ye) bāzi kārde* «նա խաղում էր», (էսփիվարդի) *dar(ə) xəmnə* «նա ուտում է», *dai(ə) xərdə*

«նա ուտում էր», (քալիջան-ռոսթադի) *dar jombə* «ես ծամում եմ», *dai šimə* «ես գնում էի», (քորդեխեյի) *dar(ne) šumə* «ներանք գնում են», *dai(ε) pāre bie* «պայթում էր», վելաթուրի *dara varma* «ես տանում եմ», լանիզի *dare zendegi komi* «մենք ապրում ենք», դարբանդսարի *dave xordema* «ես ուտում էի», աֆթարի *dari nerenni* «ես նստում եմ», *dabošti minerāšti* «ես նստում էի», սանգեսարի *dari xunendi* «ես նստում եմ», *dabiyi mišuyi* «ես գնում էի», շահմիրզադի *dar āmma* «ես գալիս եմ», *davema mogotama* «ես ասում էի», քալարդաշթի *daremi baremi* «մենք տանում ենք», *dabiyame barimiyame* «մենք տանում էինք», թոնեքաբենի *dare bagom* «ես ասում եմ», *dabām bagom* «ես ասում էի»:

2.2.2 *kV(r)(V)*-ով կազմվող սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևեր

Հարավային և կենտրոնական թաթերենը, հարավային և կենտրոնական թալիշերենը և արևմտյան գիլաքին (II) օգտագործում են *kV(r)(V)* մասնիկը ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևերի կազմության համար:

2.2.2.1 *kV(r)(V)*-ով կազմված օժանդակ բայը նախորդում է հիմնական բայի խոնարհված ձևերին:

Այս կազմությունը հանդիպում է հարավային թալիշերենում, հարավային և կենտրոնական թաթերենում, արևմտյան գիլաքիում (II): Օրինակ՝ հարավային թալիշերեն (մասուլեի, մասալի) *kərə ākarəm* «ես բացում եմ», *kərə xəsim* «ես քնում էի», հարավային թաթերեն (էբրահիմաբադի) *kārā mākarā* «բացում է», *kārā mākariasta* «բացում էր», կենտրոնական թաթերեն (թարոմի) *kara mikari* «դու անում ես», (շալի, քոլուրի, դերովի) *kerā pajəm* «ես եփում եմ», *kerā larzim* «ես դողում էի», (գանդումաբի) *kora xose* «նա քնում է», (քարանի) *kāri xossem* «ես քնում եմ», (քաջալի) *kāri marəm* «ես ուտում եմ», *kāri mə nəštīm* «ես նստում էի», արևմտյան գիլաքի *karə xorə* «նա ուտում է», *karə ništi* «դու նստում էիր»:

2.2.2.2 Չխոնարհվող *kore*-ն հաջորդում է հիմնական բայի խոնարհված ձևերին:

Այս կառույցը օգտագործվում է կենտրոնական թաթերենի քաջալի բարբառում ներկա շարունակական (II) ժամանակաձևի կազմության համար: Օրինակ՝ քաջալի *mi šim kore* «ես գնում եմ»:

2.2.2.3 *kVr*-ով կազմված օժանդակ բայի խոնարհված ձևերը հաջորդում են հիմնական բայի անցյալ դերբային:

Կենտրոնական թաթերենի քարանի բարբառը կազմում է ներկա շարունակական (II) ժամանակաձևը *kVr*-ով կազմված օժանդակ բայի ներկա ժամանակաձևով խոնարհված ձևերի և հիմնական բայի անցյալ դերբայի համադրությամբ: Օրինակ՝ *āmia karem* «ես գալիս եմ»:

Անցյալ շարունակականը (II) հետևում է ներկա շարունակականի (II) կազմությանը՝ փոխարինելով *kVr*-ի ներկայով խոնարհված ձևերը անցյալ անկատարով: Օրինակ՝ *virita kardeym* «ես վազում էի»:

2.2.2.4 *kV(r)*-ի խոնարհված ձևերը նախորդում են անորոշ դերբային:

Կենտրոնական թալիշերենում ներկա շարունակական ժամանակաձևը կազմվում է *kā(r)*-ով կազմված օժանդակ բայի ներկա ժամանակաձևով խոնարհված ձևերի և անորոշ դերբայի համադրությամբ: Անցյալ շարունակական ժամանակաձևը կիրառում է նույն կառուցը՝ փոխարինելով *kā(r)*-ի ներկա ժամանակաձևով խոնարհումը անցյալ կատարյալով: Օրինակ՝ ասալեմի *kārima vigate* «ես վերցնում եմ», *kā(r) bim vinde* «ես տեսնում էի», փարեսարի *kārima pate* «ես եփում եմ», *kā(r) bim xəle karde* «ես կանչում էի»:

2.2.3 *andar*-ի և *kV(r)(V)*-ի համադրությամբ կազմվող սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևեր

2.2.3.1 *kārdar*-ի խոնարհված ձևերը հաջորդում են հիմնական բայի խոնարհված ձևերին:

Հարավային թաթերենի էշթեհարդի բարբառը ներկա շարունակական ժամանակաձևի կազմության համար օգտագործում է հիմնական բայի սահմանական եղանակի ներկա ժամանակաձևով խոնարհված ձևեր + *kārdar*-ով կազմված օժանդակ բայի ներկա ժամանակաձևով խոնարհված ձևեր կառուցը: Օրինակ՝ *mi ši kārdari* «նա գնում է»:

2.2.3.2 Քարացած *karda* մասնիկը նախորդում է հիմնական բայի խոնարհված ձևերին:

Կենտրոնական թաթերենի քաֆթեջի բարբառը ներկա շարունակական ժամանակաձևի կազմության համար օգտագործում է քարացած *karda* մասնիկի և հիմնական բայի սահմանական եղանակի ներկա ժամանակաձևով խոնարհված ձևերի համադրությունը: Օրինակ՝ *karda me šəm* «ես գնում եմ»:

2.2.3.3 Քարացած *dakārə/i* մասնիկը նախորդում է հիմնական բայի խոնարհված ձևերին:

Թաթոյիդ ուոբարիի բարբառում ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևերը կազմվում են չխոնարհվող *dakārə/i* մասնիկով և համապատասխանաբար հիմնական բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ կատարյալ ժամանակաձևերի խոնարհված ձևերով: Օրինակ՝ *dakārə nəvisom* «ես գրում եմ», *dakārə nəvišt* «նա գրում էր»:

2.2.3.4 Անորոշ դերբայը դրվում է քարացած *karə/kəra* մասնիկի և *dar*-ով կազմված օժանդակի բայի խոնարհված ձևերի միջև:

Այս կառուցը հանդիպում է արևմտյան գիլաքիում սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական (III) ժամանակաձևերի կազմության համար, օրինակ՝ *karə xurdən darəm* «ես ուտում եմ», *karə xofian da bum* «ես քնում էի»:

2.2.3.5 Կարճ անորոշ դերբայը նախորդում է քարացած *ka* մասնիկին, որին հաջորդում են *dər-/dā-* խոնարհված ձևերը:

Արևելյան գիլգիում այս կառույցը կիրառվում է անցյալ և ներկա շարունակական ժամանակաձևերի (II) կազմության համար: Օրինակ՝ *gute ka dərəm* «ես ասում եմ», *gute ka dā bum* «ես ասում էի»:

2.2.4. Սահմանական եղանակի ներկա և անցյալ շարունակական ժամանակաձևերի կազմությունը ցուցական դերանուններով

Հյուսիսային զազայում և հյուսիսային թաթերենի քալասուրի-խոյնառուղի բարբառում այս ժամանակաձևերի կազմության համար օգտագործվում է ցուցական դերանուն + բայի դիմային վերջավորություններ + հիմնական բայի համապատասխան ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերով խոնարհված ձևեր կառույցը: Օրինակ՝ հյուսիսային զազա *az nāo yanuna* «ես գալիս եմ», *mā nāw nisanīmē ro* «մենք նստում էինք», քալասուրի-խոյնառուղի *avum onjäre* «ես կտրում էի», *enum šušte* «ես լվանում էի»:

2.3 Ըղծական եղանակից ծագող անկատար անցյալ ժամանակաձև

2.3.1 Ներկայի հիմքով կազմված անկատար անցյալ ժամանակաձև

2.3.1.1 Ներկայի հիմք + *-i-* կառույց

Այս կառույցը հանդիպում է թալիշերենում և կենտրոնական թաթերենում: Օրինակ՝ հյուսիսային թալիշերեն (լենքորանի) *avaim* «ես բերում էի», (լերիքի) *ahaysš* «դու ուտում էիր», (անբարանի) *akim* «ես անում էի», կենտրոնական թալիշերեն (ասալեմի) *viragənim* «ես ընկնում էի», (փարեսարի) *anəšim* «ես նստում էի», հարավային (մասալի) *šuriri* «ես լվանում էի», (մասուլեի) *lakim* «ես ընկնում էի», կենտրոնական թաթերեն (շալի) *heizi* «նա վեր էր կենում», (քոլուրի) *vajim* «ես ասում էի», (դերովի) *šim* «ես գնում էի», (գեյլավանի) *harim* «ես ուտում էի»:

2.3.1.2 Ներկայի հիմք + *-(V)n/m(V)-* կառույց

Այս բանաձևը կիրառում են գորանին, կենտրոնական կասայան բարբառները (քալարդաշթի, թոնեքաբոնի, ռամսարի II), թաթոյիդ թալեղանին: Օրինակ՝ գորանի *ārēnē* «ես բերում էի», քալարդաշթի *pušimiyame* «ես հագնում էի», թոնեքաբոնի *gona bām* «ես ասում էի», ռամսարի *kušanā bām* «ես սպանում էի», թալեղանի *šem biame* «ես գնում էի»:

2.3.2 Անցյալի հիմքով կազմված անկատար անցյալ ժամանակաձև

2.3.2.1 Անցյալի հիմք + *-i-* կառույց

Անկատար անցյալը օգտագործում է այս կառույցը արևմտյան գիլգիում, կենտրոնական թաթերենում, թաթոյիդ ուղղաբարիում: Օրինակ՝ *šeyim/šuyim* «ես գնում էի», կենտրոնական թաթերեն (գանդոմաբի) *devaštaym* «ես վազում էի», (քարանի) *viriteym* «ես վազում էի», (քարնաղի) *šeym* «ես գնում էի», ուղղաբարի *gutim* «ես ասում էի»:

2.3.2.2 Անցյալի հիմք + $-(V)n/m(V)$ - կառույց

Այս կազմությունը հանդիպում է կենտրոնական կասայան ռամսարիի բարբառում և զազայում: Օրինակ՝ ռամսարի *katenā bām* «ես ընկնում էի», զազա *šiyēna* «ես գնում էի»:

2.4 չի-/չէ- ժխտական մասնիկը

Չազան և հյուսիսային թաթերենի հարզանի բարբառը ժխտման համար օգտագործում են *չի-/չէ-* ժխտական մասնիկը:

Օրինակ՝

զազա (հարավային բարբառ)

yaw kinjā min ā nawīya astā/ast bī.

«Ես ունեմ/ունեի նոր զգեստ»:

yaw kinjā min ā nawīya činē yā/bī.

«Ես չունեմ/չունեի նոր զգեստ»:

զազա (հյուսիսային բարբառ)

domānē ay astē/ast bī.

«Ես ունեմ/ունեի երեխաներ»:

domānē ay činol/čin bī.

«Ես չունեմ/չունեի երեխաներ»:

հարզանի

čaman en kōrīrī xabarem čīnīya.

«Ես դրա մասին տեղեկություն չունեմ»:

2.5. Հոլովական համակարգը

2.5.1 Ուղղական հոլովի հոգնակի թվի և թեք հոլովի եզակի թվի կազմության համընկնում

Կենտրոնական թաթերենի քաֆթեջի բարբառում, հարավային թաթերենի չալի և սազգաբադի բարբառներում, Սեմնանի շրջանի սեմնանի և մոմենաբադի բարբառներում, գորանիի հավրամի բարբառում, զազայում դեռևս պահպանվել է գոյականի սեռի քերականական կարգը: Մի կողմից արական սեռի գոյականների հոգնակի թվի ուղղական հոլովի կազմությունը նույնանում է եզակի թվի թեք հոլովի կազմության հետ սեմնանիում, կենտրոնական թաթերենի քաֆթեջի բարբառում, մոմենաբադիում, զազայում, հարավային թաթերենի չալի և սազգաբադի բարբառներում, մյուս կողմից այս համընկնումը նկատելի է իզական սեռի գոյականների դեպքում սեմնանիում, գորանիում, կենտրոնական թաթերենի քաֆթեջի բարբառում: Օրինակ՝

սեմնանի

asp «ծի»

karga «հավ»

արական

իզական

ուղղական հոլով եզ.թ.

asp

karga

թեք հոլով եզ.թ.

aspi

kargi

ուղղական հոլով հզ.թ.

aspi

kargi

թեք հոլով հզ.թ.

aspun

kargun

կենտրոնական թաթերեն (քաֆթեջի)

	<i>mardak</i> «տղամարդ»	<i>kelek</i> «աղջիկ»
	արական	իգական
ուղղական հոլով եզ.թ.	<i>mardak</i>	<i>keleka</i>
թեք հոլով եզ.թ.	<i>mardakə</i>	<i>kelekə</i>
ուղղական հոլով հզ.թ.	<i>mardakə</i>	<i>kelekə</i>
թեք հոլով հզ.թ.	<i>mardakon</i>	<i>kelekon</i>

գորանի

	<i>har</i> «ավանակ»	<i>aḏā</i> «մայր»
	արական	իգական
ուղղական հոլով եզ.թ.	<i>har</i>	<i>aḏā</i>
թեք հոլով եզ.թ.	<i>harī</i>	<i>aḏe</i>
ուղղական հոլով հզ.թ.	<i>hare</i>	<i>aḏe</i>
թեք հոլով հզ.թ.	<i>harā</i>	<i>aḏāyā</i>

մոմենաբադի

	<i>asb</i> «ծի»	<i>boza</i> «այծ»
	արական	իգական
ուղղական հոլով եզ.թ.	<i>asb</i>	<i>boza</i>
թեք հոլով եզ.թ.	<i>asbe</i>	<i>boza</i>
ուղղական հոլով հզ.թ.	<i>asbe</i>	<i>boze</i>
թեք հոլով հզ.թ.	<i>asbon</i>	<i>bozon</i>

զազա

	<i>birā</i> «եղբայր»	<i>wāa</i> «քույր»
	արական	իգական
ուղղական հոլով եզ.թ.	<i>birā</i>	<i>wāa</i>
թեք հոլով եզ.թ.	<i>birāy</i>	<i>wāa</i>
ուղղական հոլով հզ.թ.	<i>birāy</i>	<i>wāy</i>
թեք հոլով հզ.թ.	<i>birāyu(n)</i>	<i>wāu(n)</i>

հարավային թաթերեն (սազաբադի)

	<i>varg</i> «զալլ»	<i>mīša</i> «ոչխար»
	արական	իգական
ուղղական հոլով եզ.թ.	<i>varg</i>	<i>mīša</i>
թեք հոլով եզ.թ.	<i>vārge</i>	<i>mīša</i>
ուղղական հոլով հզ.թ.	<i>vārge</i>	<i>mīše</i>

թեք հոլով հգ.թ.

vargün

mišün

հարավային թաթերեն (չալի)

xar «ավանակ»

karka «հավ»

արական

իզական

ուղղական հոլով եգ.թ.

xar

kárka

թեք հոլով եգ.թ.

xáre

kárka

ուղղական հոլով հգ.թ.

xáre

kárke

թեք հոլով հգ.թ.

xarón

karkón

2.5.2 *rādiy*-ից ծագող բացառական հոլովի ցուցիչ

Չազայում և հյուսիսային թաթերենի հարզանիի բարբառում բացառական հոլովն արտահայտվում է **V* ետդիրով, որը հանգում է հին պարսկերեն *rādiy* ետդիրին:

Օրինակ՝

զազա

Har diyī tabar da roništī/ništī ro, findiqī wardī ū čāyā kaska šimita, bilbilē ka dāra rā firdāyēna dārēnā sar tamāša kardī.

«Նրանք երկուսով նստել էին դրսում, ուտում էին ընկույզ և ըմպում էին կանաչ թեյ՝ դիտելով, թե ինչպես են ծվվալով ծառից ծառ թոչում սոխակները»:

հարզանի

man en jōbe teytr̥ ūmūtma,

«Ես այս բառը քեզնից եմ սովորել»:

2.5.3. Ներգոյական հոլովի կազմությունը հին իր. **zrd*-ից ծագող ձևերով

Չազայում, թալիշերենում, թաթերենում, թաթոյիղ թալեղանիում, մազանդարանիում, կենտրոնական Ալթորդի բարբառներում (լալունի, շահրեսթանաքի, վելաթուրուի, յուշի), կենտրոնական կասայան բարբառներում (ռամսարի, քալարդաշթի), գորանիում, Սեմնանի շրջանի բարբառներում (սեմնանի, բիյաբունաքի, աֆթարի, սանգեսարի, շահմիրզադի) ներգոյական (locative-inessive) հոլովը արտահայտվում է հին իր. **zrd* «սիրտ»-ից ծագող ձևերով:

Օրինակ՝

զազա (Հոզաթի բարբառ)

mā makubān kanīmē zarayē qutiya.

«Մենք դնում ենք նամակները տուփի մեջ»:

թալիշերեն (անբարանի)

hiin dālān gandəm zārd bə.

«Յորենը դեղնել էր դաշտերում»:

թաթերեն (քաֆթեջի)

čela ke dala nehāyā.

«Իլիկը տան մեջ է»:

թալեղանի

sang bakate hawzi dele

«Քարն ընկավ ջրավազանի մեջ»:

մազանդարանի

me otāq-e dele

«Սենյակի ներսում»

Վելաթրուի

ye yadr-i asal hōita, xaši dōkkun behešta, ya kōisa-i dela behešta.

«Նա բերեց մի քիչ մեղր, լցրեց այն ամանի մեջ իր խանութում»:

ռամսարի

čamedān-e del

«Ճամպրուկի մեջ»

սեմնանի

a šamā pi xeili mammun-um ki šamā h(ō)stun dela-e kāya mu pi qadr(e)dāni hā-k(a)rjūtun.

«Ես շատ շնորհակալ եմ ձեզնից, որ դուք ինձ գնահատել եք ձեր նամակում»:

աֆթարի

mon das dele hečči denaboa.

«Իմ ձեռքում ոչինչ չկա»:

շահմիրզադի

ū dala šiša dārā.

«Շշի մեջ ցուր կա»:

գորանի (քանդուկայի)

ya žanī xās dilt bāzār tušim āma, bardanim a yāna.

«Ինձ մի գեղեցիկ կին հանդիպեց շուկայում և ինձ տուն տարավ»:

Հավելված. Բառային զուգաբանություններ

Թեմայի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են երեսուն բառային զուգաբանություններ, որոնք համառոտ ներկայացված են ստորև.

1. Զազա (հարավային) *arma, armaī, ērmī*, (հյուսիսային) *harma* «բազուկ», թալ. *ām* «ուս; բազուկ»:
2. Զազա (հյուսիսային) *āsmā*, (հարավային) *āsmī, āšma, āšmā* «լուսին», թալիշերեն *ov, ovšəm, ošum*, թաթերեն *owešma, ušma/ā, ošma*:
3. Թալիշերեն *asp/bō* «հեծյալ», զազա (հարավային) *aspār, āspār, spār*:
4. Զազա (հարավային) *barmā-*, (հյուսիսային) *barvā-/barbā-* «լացել, արտասվել», թալիշերեն *bame*, թաթերեն (շալի, դերովի, քոլուրի) *barama*, (հարզանի) *beram/beramiste*, (ասքեսթանի) *baramaste*, (գեյլավանի) *baramasi*, (քարինի, քարնադի) *baraməsan*, (քաջալի) *vōramestan*, (լերդի) *baraməstan, beremesten*, (չալի) *bermam/bermas*, (թաքեսթանի) *berban/berbanast*, (Էբրահիմաբադի) *bebram/bebramast*, (Էշթեհարդի) *berben/berbenest*, մազանդարանի *bərmə, bērmē*, գիլաքի *barmē*, քալարդաշթի *berme*, թոնեքաբոնի *bormē*, գորանի (քանդուկայի) *buřin*, (գավրաջուի) *biram-/biramis-*, սեմնանի *burma*, սանգեսարի *borma, bərma*, լասգերդի *burma*, աֆթարի *burme*:
5. Զազա *čam* «գետ», գորանի (քանդուկայի, գահվարայի, զարդայի) *čam*:
6. Կասսյան մշակույթային տերմին կարելի է համարել *kata* «բրնձից պատրաստված ճաշատեսակ» բառը:
7. Զազա (հարավային) *kaya, kīya, kēya, kē, ka*, (հյուսիսային) *ča* «տուն», թալիշերեն *ka* «id.», թաթերեն *ka, kar, čar*, գորանի (գահվարայի) *ka*, սեմնանի *kā*, լասգերդի *ka*, սանգեսարի *k'e*, բիյաբունաքի *kīa*, աֆթարի *kīye*:

8. Մազանդարանի *lār* «կանաչ մարգագետին», թալեղանի *lār*, զազա (հյուսիսային) *lārallārika* «ճահիճ»:
9. Թալիշերեն (հարավային) *lās(a)* «քար; ժայռ», *lāssa* «քարանձավ», (հյուսիսային) *lūassa* «լեռան գագաթ», գիլաքի *lāsa* «ժայռ», *lās* «քար», մազանդարանի *lās* «քար; ժայռ», սանգեսարի *līs* «հարթ քար»:
10. Մազանդարանի *lavilelə* «կաթսա. փոր», գիլաքի *lavə*, վելաթրուի *lavī* «կաթսա», թալիշերեն *lava(ng)* «կաթսա. փոր», զազա (հյուսիսային) *lē* «մեծ կաթսա»:
11. Չազա *maṛa* «մուկ», թալիշերեն *mā/ora*, թաթերեն (խոյնի) *mara*, (քարանգանի) *murā*, գորանի (քանդուլայի, լուհոնի) *mila*:
12. Չազա (հարավային) *mašta, mašda, mašti*, (հյուսիսային) *masta* «վաղը», թալիշերեն *māšta, māštana, māstanaj, māstone* «առավոտյան», *māski, māšgi, māškina, māškinajo* «վաղը»:
13. Կասսպյան *oštolum/əštələm/əštelem* «պատերազմի, մարտի կոչ», որը պահպանվել է միայն մազանդարանիում և սեմնանիում:
14. Չազա *pīl, pīla* «մեծ», գիլաքի (ռաշթի) *pile, pil(l)ə* «id.», (լահիջանի) *pilā*, (գալեշի) *pillə*, (լանգեռուդի) *pile, pilə*, (մաչիանի) *pillā*, (ջիրանդեի) *pilla*, թաթերեն (խալխալի) *pilla*, (ալուլաքի) *pilla*, թալեղանի (Ֆաշանդաքի, դոնբուդի) *pilla*, (միրի) *pilla/pille*, (քաշի, սուհանի) *pille*, (հասիրանի) *pila*, ալամուփի (զազորխանի) *pil(o)*, թոնեքաբոնի *pillā*, բուին-զահրայի *pilla*:
15. Գիլաքի *rāš* «հաճարենու տեսակ, *Fagus sylvatica L.*», մազանդարանի *rāš*, քալարդաշթի *rāš*, ռամսարի *rāš*, թալիշերեն (հյուսիսային) *razdo*, (հարավային) *ālāš/ālūš*:
16. Չազա *rau* «արագ», թալիշերեն *ra*, թաթերեն *rav*, սեմնանի *raik*:
17. Չազա (հարավային) *sī, sīyar* «քար», թալիշերեն *səγ, sə, səg, si*, թաթերեն *səg, səγ, sey, sax*:
18. Գիլաքի *sikā* «բադ», մազանդարանի (սարի, բաբուլի) *sikā*, սանգեսարի *sikā*, աֆթարի *sikā*, շահմիրզադի *sikā*:
19. Չազա *sil* «գոմարթ», թալիշերեն *səl*:
20. Չազա *sit, šit* «կաթ», գորանի (լուհոնի) *šot*, (քանդուլայի) *šift(e)*, (բաջալանի) *šift*, թալիշերեն *šət*, թաթերեն *šet, šət, šert*, սեմնանի *šat*, սանգեսարի *šat*, սորխեի *šat*, լասգերդի *šat*, բիյաբունաքի *šat*, աֆթարի *šet*:
21. Թալիշերեն *sūk, sūkola, sūko* «աքաղաղ», թաթերեն *sōgla*, գիլաքի *sūkule*:
22. Մազանդարանի *tahu, talī* «փուշ», սեմնանի *talī, tale* «վայրի փշոտ բույս», թալիշերեն *tīa* «փուշ», զազա *talī*:
23. Թաթերեն *tīl* «ցեխ», թալիշերեն *tul, təl, təlīn, tīlend* «ցեխոտ; կեղտոտ», մազանդարանի *tīl, tīlən*, գիլաքի *tīl, tūl, tūl*, սեմնանի *tōl(a), tīl(a)*, լասգերդի, սորխեի *tōl, tūl*, սանգեսարի *tūl*:

24. Զազա *usār, wusār, wasār, visār, wasārī, vazārī* «զարուն», թալիշերեն *avasōr*, թաթերեն (հարզանի) *āvāsōr*, (ասրեսթանի) *avsāl*, (քաջալի) *avasāl*:
25. Թալիշերեն *vəšm* «ղլը, *Coturnix*», գիլաքի *vūšūm, vošūm, ūšūm*, մազանդարանի *vəšəm*:
26. Զազա (հյուսիսային) *vēsā-*, (հարավային) *vašā-* «վառել», թալիշերեն *vaš-*, թաթերեն *vaš-*:
27. Զազա (հյուսիսային) *vindā-*, (հարավային) *vindard-* «մնալ», թաթերեն (վաֆսի) *vender-* «կանգնել; մնալ», (ալվիրի) *vendar-* «կանգնել», (շալի, քարանգանի) *vəndard-* «մնալ», (քաջալի, քոլուրի) *vendar-* «կանգնել», (հարզանի) *vend-*, թալիշերեն (մասուլե) *vənd-*:
28. Զազա (հարավային) *vizēr*, (հյուսիսային) *vīžēr, vižērī* «երեկ», թալիշերեն (մասալի) *ziri*, (մասուլեի) *zer*, (ասալեմի) *izər*, (անբարանի, լենքորանի) *zina*, թաթերեն *zir*, *azirla*, սեմնանի *izili*, լասգերդի *azi*, սորխեի *aza*, աֆթարի *yezze*, շահմիրզադի *ādī*, սանգեսարի *izi*, գորանի (քանդուկայի, գահվարայի, լուռնի, գավրաջուի) *hizi, hiziaka*, (քաջալանի) *uzera/ūzēra*:
29. Գալեշի *yaš* «հիվանդություն», գորանի *ēš-/īš-* «ցավել»:
30. Զազա (հյուսիսային) *zārānja* «կաքավ», (հարավային) *zaraĵ, zarraž*, թալիշերեն *zaraĵ*, թաթերեն *zarag, zaraĵ, zaraĵ, zərəĵ*, գիլաքի *zarač*, սանգեսարի *zarēž, zaraž*, մազանդարանի *zareč*, գորանի (հավրամանի, քանդուկայի) *žaraž(i)*:

Եզրակացություններ

1. Հարավկասպյան-ատրպատականյան իրանական լեզուների և բարբառների հնչյունական, բառային և ձևաբանական զուգաբանությունների քննությունը հաստատում է առաջարկվող լեզվամիության գոյությունը:
2. Հնչյունական մակարդակում հայտնաբերվել է մեկ զուգաբանություն, որը միավորում է զազան և գորանին:
3. Ձևաբանական մակարդակում ամենաշատ զուգաբանություններն ունեն զազան գորանին և թաթերենը (տես աղյուսակներ 1, 2): Զազայի և թաթերենի ընդհանուր վեց զուգաբանություններից երեքը հանդիպում են բացառապես այս երկու լեզուներում:
4. Հայտնաբերված բառային զուգաբանությունները հիմնավորում են զազայի, գորանիի, թալիշերենի և թաթերենի սերտ կապը (տես աղյուսակներ 3,4):
5. Այսպիսով, հարավկասպյան-ատրպատականյան լեզվամիությունը կազմող լեզուների հնչյունական, բառապաշարային և ձևաբանական զուգաբանությունների ընդհանուր քննությունը (տես աղյուսակներ 5, 6, 7) ցույց է տալիս, որ այս ընդարձակ լեզվամիության մեջ առկա է ավելի նեղ լեզվամիություն, որը միավորում է թաթերենը, թալիշերենը, գորանին և զազան. դա վկայում է այն մասին, որ մինչ Կասպից ծովի հարավային ափերից և Ատրպատականից զազանների և գորանների գաղթելը այս լեզուներով խոսող ժողովուրդները եղել են հարևաններ, որոնց դարավոր լեզվական շփումների արդյունքում էլ ձևավորվել են լեզվամիությունը հիմնավորող զուգաբանությունները:

Ջազա	թալիշերեն	1
	թաթերեն	6
	թաթոյիդ բարբառներ	3
	գիլաքի	2
	մազանդարանի	2
	Սեմնանի շրջանի բարբառներ	3
	Կենտրոնական կասայան բարբառներ	3
	Կենտրոնական Ալբորզի բարբառներ	2
գորանի	2	

Աղյուսակ 1. Ջազայի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների ձևաբանական զուգաբանությունների քանակը

Գորանի	թալիշերեն	2
	թաթերեն	3
	թաթոյիդ բարբառներ	2
	գիլաքի	-
	մազանդարանի	1
	Սեմնանի շրջանի բարբառներ	2
	Կենտրոնական կասայան բարբառներ	2
Կենտրոնական Ալբորզի բարբառներ	1	

Աղյուսակ 2. Գորանիի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների ձևաբանական զուգաբանությունների քանակը

Ջազա	թալիշերեն	18
	թաթերեն	13
	թաթոյիդ լեզուներ	2
	գիլաքի	4
	մազանդարանի	6
	Սեմնանի շրջանի բարբառներ	7
	Կենտրոնական կասայան բարբառներ	2
	Կենտրոնական Ալբորզի բարբառներ	1
գորանի	7	

Աղյուսակ 3. Ջազայի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների բառային զուգաբանությունների քանակը

Գորանի	թալիշերեն	6
	թաթերեն	6
	թաթոյիդ լեզուներ	-
	գիլաքի	3
	մազանդարանի	3
	Սեմնանի շրջանի բարբառներ	5
	Կենտրոնական կասայան բարբառներ	1
	Կենտրոնական Ալբորզի բարբառներ	-

Աղյուսակ 4. Գորանիի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների բառային զուգաբանությունների քանակը

Ջազա	թալիշերեն	19
	թաթերեն	19
	թաթոյիդ բարբառներ	5
	գիլաքի	6
	մազանդարանի	8
	Սեմնանի շրջանի բարբառներ	10
	Կենտրոնական կասայան բարբառներ	5
	Կենտրոնական Ալբորզի բարբառներ գորանի	3 10

Աղյուսակ 5. Ջազայի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների ընդհանուր զուգաբանությունների քանակը

Գորանի	թալիշերեն	8
	թաթերեն	9
	թաթոյիդ բարբառներ	2
	գիլաքի	3
	մազանդարանի	4
	Սեմնանի շրջանի բարբառներ	7
	Կենտրոնական կասայան բարբառներ	3
	Կենտրոնական Ալբորզի բարբառներ	1

Աղյուսակ 6. Գորանիի և մերձկասայան-ատրպատականյան լեզուների ընդհանուր զուգաբանությունների քանակը

թալիշերեն	12
թաթերեն	11

	թաթոյիղ բարբառներ	3
	գիլաքի	8
Սեմնանի	մազանդարանի	11
շրջանի	կենտրոնական կասպյան բարբառներ	5
բարբառներ	կենտրոնական Ալթորգի բարբառներ	3

Աղյուսակ 7. Սեմնանի շրջանի բարբառների և մերձկասպյան-ատրպատականյան լեզուների բառային զուգաբանությունների ընդհանուր քանակը

Ատենախոսության թեմայով հրատարակվել են

1. Hakobian G., “Landscape Terminology in Western Iranian”, *Rocznik Orientalistyczny*, T. LXXI/2, Polish Academy of Sciences, 2018, pp. 57-65.
2. Hakobian G., Asatrian G., “On *-d- > -l- and *-ṣ- > -l- in Western New Iranian”, *Iran and the Caucasus* 22/3, Leiden-Boston: Brill, 2018, pp. 297-307.
3. Hakobian G., “Nominal Inflection in South-Caspian-Aturpatkan Iranian Dialects”, *Proceedings of the Third International Conference dedicated to Political, Economic and Cultural Relations between Georgia and Iran*, Tbilisi, 2017, pp. 118-126.
4. Hakobian G., “Lexical Similarities of Zazaki and Talishi”, Zeynep Arslan (ed.), *Zazaki-Yesterday Today and Tomorrow. Survival and Standardization of a Threatened Language*, University in Graz, 2017, pp. 33-55.

Акопян Гоар Гарегиновна

ЮЖНОКАСПИЙСКО-АТУРПАТАКАНСКИЙ ИРАНСКИЙ ЯЗЫКОВОЙ СОЮЗ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 — «Древние и новые языки Азии»

Защита диссертации состоится 13-го июня 2022г., в 15:00 часов, на заседании специализированного совета 019 по лингвистике ВАК РА, действующего при Институте языка имени Р. Ачаряна НАН РА.

Адрес: г. Ереван, 0015, ул. Григора Лусаворича 15

РЕЗЮМЕ

Термин «языковой союз» подразумевает, как правило, союз генетически не связанных языков, которые приобрели общие черты на уровнях фонологии, морфологии, лексикона и синтаксиса в результате длительного контактного и конвергентного развития.

В данной работе мы подходим к «языковому союзу» с точки зрения генетически близкородственных языков, рассматривая группу северо-западных иранских диалектов: заза, горани, талышский, татский, гиляки, мазандаранский, диалекты Семнана, а также центральнокаспийские диалекты и некоторые переходные диалекты центрального Альборза.

Диссертация состоит из следующих частей: Введение, Глава I, Глава II, АДДЕНДУМ, Заключение, Библиография.

Во введении обсуждаются цель исследования, географическое распространение языков и диалектов, формирующих данный языковой союз, методологические вопросы и технические детали, касающихся темы диссертационного исследования.

Первая глава посвящена изучению фонетических изоглосс. Фонетические изоглоссы, свойственные для данного языкового союза, в той или иной степени пересекаются с соответствующими элементами курдского, персидского, центральных диалектов. По существу, единственная фонетическая изоглосса, имеющая эксклюзивный характер – это развитие протоиранского начального **h₂-* (**xw-/*hw-*) > *w-/v-* в заза и некоторых диалектах горани. Несмотря на скудность объединяющих фонетических изоглосс, тем не менее, указанное развитие является весьма диагностическим.

Во второй главе представлены морфологические изоглоссы. Нами выделены следующие: 1) настоящее время изъявительного наклонения с формантом, происходящим от древнеиранского **-ant-*, 2) настоящее время изъявительного наклонения без каких-либо маркеров, 3) длительное время изъявительного наклонения, образованного вспомогательным глаголом, производным от *andar*, 4) длительное время изъявительного наклонения, образованного вспомогательным глаголом, производным от *kV(r)(V)*, 5) длительное время изъявительного наклонения,

основанном на комбинации *andar* и *kV(r)(V)*, 6) длительное время изъявительного наклонения с указательным местоимением, 7) имперфект, основанный на оптативе, 8) маркер отрицания *ēi-/ēī-*, 9) совпадение единственного числа именительного падежа и множественного числа косвенного падежа, 10) маркер аблативного падежа, происходящего от *rādiy* и 11) маркер местного падежа, происходящего от древнеиранского **zrd-*.

Нами замечено, что заза и горани разделяют большинство изоглосс с татским, а не с гиляки или мазандарани, учитывая гипотетическую миграцию в 9/10-12 вв. заза из Южного Каспия, из высокогорья Гилана, Дейлама, на территорию их нынешнего проживания. Южно-Каспийский регион также считается родиной горан, откуда они перебрались на ирано-иракскую границу, где обитают сейчас.

Тема лексических изоглосс исследуется в приложении. Нами обнаружены и проанализированы тридцать лексических изоглосс, отражающих различные семантические аспекты, такие как части тела, названия животных, птиц, небесных объектов, ландшафтная терминология, части суток и времена года, названия растений, абстрактные существительные, глаголы, прилагательные и т.д., которые объединяют языки и диалекты этого обширного региона. И здесь, заза и горани предполагают более тесную связь с татским и талышским языками. Более того, заза и талышский имеют четыре эксклюзивные изоглоссы: заза *arma*, *armaī*, *harma*, *ērmī* «плечо, рука», талышский *ām* 'id.', заза *aspār*, *āspār*, *spār* 'всадник', талышский *asp/bō* 'id.', заза *mašti*, *mašda*, *masta* 'завтра', талышский *māšta*, *māštana*, *māstanaj*, *māstone* 'утром', *māški*, *māšgi*, *māškina*, *māškinajo* 'завтра', заза *sil* 'навоз', талышский *səl* 'id.'.

Следующие лексические изоглоссы встречаются исключительно в заза, талышском и татском: заза *āśma*, *āśmī*, *āśma*, *āśmā* 'луна', талышский *ov*, *ovšəm*, *ošum* 'id.', татский *owešma*, *ušmalā*, *ošma* 'id.', заза *sī*, *sīyar* 'камень', талышский *səγ*, *sə*, *səg*, *sī* 'id.', татский *səg*, *səγ*, *sey*, *sax* 'id.', заза *usār*, *wusār*, *wasār*, *visār*, *wasārī*, *vazārī* 'вечна', талышский *avasōr* 'id.', татский *āvāsōr*, *avsāl*, *avasāl* 'id.', заза *vēsā-*, *vašā-* 'сжигать', талышский *vaš-* 'id.', татский *vaš-* 'id.', заза *vīndā-*, *vīndard-* 'оставаться', татский *vender-*, *vendar-*, *vəndard-*, *vənd-*, *endār-* 'id.', талышский *vənd-*, *īnd-* 'id.'.

Горани, в свою очередь, разделяет большинство изоглосс с заза, одна из которых встречается только в этих двух языках: горани *čam* 'река', заза *čam* 'id.'.

Эксклюзивные изоглоссы, объединяющих заза, талышский, татский и горани, минимальны, но интересны: заза *maṛa* 'мышь', талышский *mā/ora* 'id.', татский *marā*, *murā*, горани *mila*.

Таким образом, довольно большое количество изоглосс, объединяющих татский и талышский с заза и горани, отличает их от остальных языков этого обширного региона, образуя малый языковой союз в рамках крупного языкового союза Южного Каспия и Атурпатакана.

Библиография насчитывает более 400 источников.

Лингвистический материал языка заза основан на полевых исследованиях автора.

THE IRANIAN CASPIAN-ATURPATAKAN SPRACHBUND

Thesis for the PhD degree of Philological Sciences, in 10.02.06 “Ancient and Modern Languages of Asia” .

The defense of the thesis will take place on 13 June, 2022 at 15.00 at the session of the Specialised Council of Linguistics 019 of SCC RA in the Language Institute after H.Acharyan NAS RA..

Address: Yerevan 0015, Grigor Lusavorich St. 15.

SUMMARY

The term *Sprachbund* implies as a rule a union of genetically non-related languages that have acquired similar features on the levels of phonology, morphology, syntax, and lexicon, as a result of long coexistence and language contacts. We approach to *Sprachbund* from the perspective of genetically related languages, discussing a group of closely related north-western Iranian languages: Zazaki, Gorani, Talishi, Tati, Gilaki, Mazandarani, the languages of the region of Semnan, as well as the Central Caspian dialects and some of the transitional dialects of the Central Alborz.

The thesis has the following structure: Introduction, Chapter 1, Chapter 2, Addendum, Conclusion, and Bibliography.

Introduction discusses 1) the aim of the present study, 2) the geographical setting of the languages and dialects forming this *Sprachbund*, 3) methodological questions, and 4) technical details.

The first chapter is devoted to the study of phonetic isoglosses: The phonetic isoglosses of the languages forming this *Sprachbund* overlap to varying degree with those of Kurdish, Persian, the Central dialects, and the like. Therefore, the only phonetic feature, bearing exclusive nature, is the development of Proto-Iranian initial **h₂-* (**xw-/*hw-*) to *w-/v-* in Zazaki and some dialects of Gorani. Despite the scarcity of phonetic isoglosses, the mentioned development can be qualified as highly diagnostic for the evaluation of this Sprachbund.

The second chapter studies the morphological isoglosses. Here we have separated the following isoglosses: 1) the indicative present tense formant derived from Old Iranian **-ant-*, 2) the indicative present tense without a marker, 3) progressives formed with a locative verb, derived from *andar*, 4) progressives formed with particles derived from *kV(r)(V)*, 5) progressives based on the combination of *andar* and *kV(r)(V)*, 6) progressives built with a demonstrative pronoun, 7) imperfect based on the optative, 8) the *ēi-/ēī-* marker of the negation of existence, 9) the coincidence of the direct singular and oblique plural, 10) ablative marker going back to *rādiy*, 11) locative-inessive, derived from Old Iranian **zrd-*.

Interestingly, here Zazaki and Gorani share the most isoglosses with Tati and not with Gilaki or Mazandarani, considering the hypothetical migration of Zazas from the South Caspian region, namely the high mountainous parts of Gilan, Deylam, to the area of their present positions during the 9/10th-12th centuries, as a result of several waves of migration. The South Caspian region is also supposed to be the homeland of Gorans, from where Gorans moved to the area where they currently inhabit at an unknown date.

The lexical isoglosses are discussed in the addendum. The languages and dialects of this area have extensive shared lexical isoglosses, reflecting different semantic fields, such as body part terms, animals and birds, celestial objects, landscape terminology, household utensils, nouns denoting part of the day and seasons, plant names, abstract nouns, verbs, adjectives, etc. Here again, curiously enough, Zaza and Gorani suggest a more intimate interaction with Tati and Talishi. Moreover, Zaza and Talishi notably share four exclusive isoglosses: Zaza *arma*, *armā*, *harma*, *ērmi* ‘shoulder, arm’, Talishi *ām* ‘id.’, Zaza *aspār*, *āspār*, *spār* ‘horseman’, Talishi *asp/bō* ‘id.’, Zaza *mašti*, *mašda*, *masta* ‘tomorrow’, Talishi *māšta*, *māštana*, *māštanaĵ*, *māštone* ‘in the morning’, and *māški*, *māšgi*, *māškina*, *māškinaĵo* ‘tomorrow’, Zaza *sil* ‘cowdung’, Talishi *səl* ‘manure, horse dung’.

The closer links between Zaza, Talishi and Tati are built on five lexical units, which within Western Iranian have primary function only in these languages: Zaza *āsma*, *āsmī*, *āšma*, *āšmā* ‘moon’, Talishi *ov*, *ovšəm*, *ošum* ‘moon’, Tati *owešma*, *ušmalā*, *ošma* ‘moon’, Zaza *sī*, *sīyar* ‘stone’, Talishi *səγ*, *sə*, *səg*, *si* ‘id.’, Tati *səg*, *səγ*, *sey*, *sax* ‘id.’, Zaza *usār*, *wusār*, *wasār*, *visār*, *wasārī*, *vazārī* ‘spring’, Talishi *avasōr* ‘id.’, Tati *āvāsōr*, *avsāl*, *avasāl* ‘id.’, Zaza *vēsā-*, *vašā-* ‘to burn’, Talishi *vaš-* ‘to burn; to shine, to light’, Tati *vaš-* ‘to burn; to set on fire; to light’, Zaza *vindā-*, *vindard-* ‘to stay, remain; stand; wait’, Tati *vender-*, *vendar-*, *vəndard-*, *vənd-*, *endār-* ‘id.’, Talishi *vənd-*, *ind-* ‘id.’

Noteworthy, Gorani shares most of the isoglosses with Zazaki, one of which occurs only in these two languages: Gorani *ĉam* ‘river’, Zaza *ĉam* ‘id.’.

Exclusive isoglosses between Zazaki, Talishi, Tati and Gorani appear to be minimal, but of a compelling nature: Zaza *maṛa*, Talishi *mālorā*, Tati *marā*, *murā*, Gorani *mila*, denoting ‘mouse’.

Thus, the striking number of isoglosses that Zazaki, Gorani, Tati and Talishi share, distinguishes them from the rest of the idioms of this vast region, thus forming a smaller Sprachbund within the bigger South Caspian-Aturpatakan Sprachbund.

The bibliography comprises more than 400 sources.

The linguistic data for Zaza is recorded by the author.